

(Լիվոնոյի գիւանին նամակին հետ նոյն գիր,) հետեւեալը. «Ես Սամուէլ վարդապետս, եկի ի Հռոմ ի Թուին փրկչին 1773 ի Մայիսի 3, եւ զկնի 1775 առի զգիրքս ծախու ի վերականգու Մարիամ Եգիպտացւոյ եկեղեցոյ Տիմոթէոս բանիբուն վ. էն Գաղատացւոյ, ուստի տեսողաց յայտ եղիցի, որ ձեռամբ իմով գրեցի, բաւ է.:

Թէ Սամուէլ Եպիսկոպոս Երզնկացի 1773—5 Հռոմ կեցած է, ահաւասիկ կատարեալպէս ստոյգ է. Յովհ. տէ Սէրբոս 12 Օգ. 1775ին վննետիկէն առ Հ. Գէորգ վ. ի Հռոմ գրած նամակին մէջ (Գիւ. Անտ.) ողջոյն կը շրկէ Սամուէլ Եպ.ին: 1774—1780ի Հռոմ Ս. Ժողովոյ կողմանէ հայազգի կղերականաց ձեռնադրիչ գրուած ըլլալը կ'աւանդէ Ուղուրլիան (վերն), եւ հաւանական է. վասն զի իրօք 1781ին ձեռնադրիչ կը կարգուի Պօղոս Արքեպ., եւ ըստ երեւութին կը միաբանի վերն յիշուած աղգային հեղինակներու աւանդութեան վերջին մասին, այն է 1780—1786 Կ. Պոլիս Խասգիւղ բնակած եւ վախճանած ըլլալուն: Սակայն այս կէտն ինծի կասկածելի կ'երեւար: Վասն զի 1. Ինքն Սամուէլ Եպս. վերոյիշեալ նամակին մէջ կ'ըսէ՝ Թէ ի հայրենիս չի դառնար այլ եւս, որ մահ մահու եւ խայթ դժոխոց է, եւ աւելի կ'ընտրէ սովամահ մեռնիլ ի Հռոմ: 2. Ուղուրլեան (անդ, էջ 224) կը գրէ, Թէ Հռոմայ Հայոց տան Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցւոյն մէջ Թաղուած կայ ոմն «Սամուէլ վ. Լաճեան, Եպիսկոպոս Պրուսայ,